

ՄԵԼԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվան 6 ռուբլի.
Առանձին համարները 5 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տ է Լ Է Ք Օ Ն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ առիթներէն).

Յայտարարութիւնը ընդունվում է ամէն լիցուով.

Յայտարարութիւնները համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպեկ.
Տ է Լ Է Ք Օ Ն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐՇԵՐՈՒՆԻ

ԲԱՑՎԱԾ Է ԿԷՍ ՏԱՐՎԱՅ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄԵԼԿ

ԻՐԱՎԱՆՈՐԴ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ

«ՄԵԼԿ» վեց ամսվայ գինն է, յուլիսի 1-ից մինչեւ տարվայ վերջը, ՎԵՑ ռուբլի. մէկ ամսվայը—մէկ ռուբլի: Ամերիկայի բաժանորդները պէտք է վճարեն կէս տարվայ համար 3 ռոլլար: Եւրոպայի բաժանորդները—16 ֆրանկ:

Կայտարարութեան ուրիշ քաղաքներէն «ՄԵԼԿ» գրվելու համար, եւ առհասարակ նամակներ եւ ծրարներ ուղարկելու, պէտք է գրել հետեւեալ հասցեով. ТИФЛИСЪ, Редакция «МШАКЪ», իսկ արտասահմանից՝ ТИФЛИС, Rédaction du journal arménien «MSCHAK».

Յայտարարութիւնները ընդունվում են բոլոր լիցուներով:

Ա Պ Ա Ռ Ի Կ Բ Ա Ս Ա Ն Ո Ր Դ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ն Չ Է Ը Ն Դ Ո Ւ Ն Վ Ո Ւ Մ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Արհեստական եղանակով.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արեւելագիտական ընկերութեան բաժանմունքը Երեւանում, Նամակ Խմբագրութեան Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Բէլ-գրայից. Արտաքին լուրեր.—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ.—ՀԵՐԱՐԴԻՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Գիւղատնտեսական ցուցահանդէս Հալլէում.

ԱՐՋԵՏԱԿԱՆ ԵՂԱՆԱԿՈՎ

Պակասում է ձուլը Անդրկովկասում: Շատ լճեր, գետեր եւ գետակներ, որոնք առաջ ունէին մեծ քանակութեամբ զանազան տեսակի ձկներ, այժմ ամայացել են այդ կողմից: Ձուլ որսողները թոյլ էին տալիս, որ ձուլը բազմանայ եւ որսում էին նրանց նաեւ այն ժամանակ, երբ ձուլը զբաղված է ապագայ սերնդի աճման հոգով:

Մենք հաղորդեցինք, որ կառավարութիւնը որոշել է սահմանափակումներ առնել որոշ ժամանակամիջոցներում, թոյլ չը

տալ ձկնորսութիւն անել: Այդ այն ժամանակամիջոցներն են, երբ ձուլը պէտք է ձուլ թափէ եւ որոնում է յարմար տեղեր այդ գործողութեան համար:

Սակայն գոյութիւն ունի եւ մի ուրիշ միջոց, այն է արհեստական կերպով ձուլ բազմացնելը, որ շատ գեղեցիկ արդիւնքներ է տուել Եւրոպայում եւ մասնաւոր Ամերիկայում: Այդ միջոցը փորձված է եւ Անդրկովկասում, սակայն դեռ սահմանափակ չափով: Այդ միջոցը կայանում է նրանում, որ ձկան ձուլերը յատուկ աւազաններում խնամում են, նրանցից հաճախ ձկնիկներ, փոքր ինչ մեծացնում եւ յետոյ այդ ձկնիկներին գցում գետերը, լճերը եւ ծովերը առկուր եւ զօրանալու համար:

Սրանից մի տասն օր առաջ Արաքսի ներքին հոսանքում: Կարադոնի կոչված տեղում, փորձ արվեց ձուլն ածելու մինչեւ 40,000 ձկնիկ գութիկի տեսակից: Ձկնիկները խնամվել էին յատուկ աւազանում մասնագետ Լեւոնի ղեկավարութեամբ: Նոյնատեսակ փորձ թափափ ձրկան վերաբերութեամբ արված է Կուր գետում:

Կան աղիւսակներ եւ այլն, ինչով որ կարելի է գործնականորեն եւ թանձրացեալ կերպով բազմաթիւ գիւղատնտեսական մասնագէտները պատահող զանազան հարցեր եւ խնդիրներ:

Առիթից օգտվելով, չենք կարող այստեղ չը յիշատակել մի վերին աստիճանի անմոռանալի եւ համակերպ անձնավորութիւն, որը ոչ միայն Գերմանիային, այլ եւ բոլոր քաղաքակրթութիւններին անփոխարինելի ծառայութիւններ է մատուցել գիւղատնտեսական աշխարհում, յատկապէս երկրագործական ճիւղում: Խօսքս Հալլէի համալսարանի ծերունազարդ պրոֆէսոր Կիւնի մասին է (Prof. Dr. J. Kühn), որը իր անթիւ ծառայութիւնների համար վաղուց ստացել է զգալի աստիճան: Կիւնի մասին խորհրդակցած ամբողջով, որը Գերմանիայում ոչ թէ ծառայած տարիների թւով է ձեռք բերվում, այլ հայրենիքին ծառայելով, գիտութեան եւ այլ ճիւղերին մատուցած օգուտներով... Եթէ Հալլէն այս օրակէն մի հիւանդի գիւղատնտեսական ինստիտուտ ունի, եթէ այդ ինստիտուտը միացել է համալսարանին, եւ ու նրա մի բաժանմունքն է կազմել, եւ վերջապէս գիւղատնտեսութիւնն էլ ճեմարանական գիտութիւնների շարքն է մտել, այդ բոլորը պրոֆէսոր Կիւնի շնորհիւ է, որը, ինչպէս ակնարկեցինք, անգնահատելի ծառայութիւններ է մատուցել բոլորակալ աշխարհին եւ իր աշակերտներից «հայրիկ» կամ «հայր» պատուանունը ստացել Անշուշտ այս խօսքը չը պիտի չլիթել ուրիշ, գիւրութեամբ ձեռք բերած եւ տառայի գոյութիւն ունեցող պատուանունների հետ... Յարգելի պրոֆէսորը ժողովրդի «հայրիկ» կոչվելու անկապտելի իրաւունքն ունի, բառի բուն նշանակութեամբ: Ձեռք կարծու, որ Գերմանիայում մի գիւղատնտես ինչի Կիւնին չաչակերտած: Դեռ մեր օրերով ուսաց երկրագործութեան միջոցաւ հրահանգ-

ալ ջրերում Բորոգինի ղեկավարութեամբ: Մի քանի տարի առաջ Նոյն տեսակ փորձեր արեց մասնագետ Կովրայիկի:

Առաջին փորձերը ցոյց են տալիս, որ գործը կարելի է ընդհանրացնել եւ մի ամբողջացրած սխեմով վերածել: Այն ժամանակ կարելի է մասնաւոր աւազաններում աճեցնել մի քանի հարիւր հազար, նոյն իսկ միլիոն ձկներ եւ նրանց փոքր ինչ մեծացնելուց յետոյ թափել ջուրը, որտեղ նրանք պէտք է հասնի առնեն, մեծանան եւ չարանան եւ յետոյ ծառայեն իբրեւ ձրկնորսութեան նիւթ:

Դա նման է այն բանին, եթէ դուք սերմանում լինէիք եւ հունձ ստանում: Դուք ձկնիկներին իբրեւ սերմ գցում էք ջրերի մէջ եւ հնձում հասնի առաձ, չաղացած ձկնիկներ: Ամերիկան արդէն օգտվում է այդ եղանակից եւ ստանում արդիւնքներ: Ինչպէս նոյնը մենք չաղացնենք:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐԵՎԵԼԱԳԻՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Երեւանում արեւելագիտական ընկերութեան ճիւղ հիմնելու անհրաժեշտութիւնը եւ կարիքը նոր չէ զգացել: Եթէ մինչեւ այժմ այդ գիտական ընկերութեան ճիւղը Երեւանում չէ բացվել, այդ բանից դիտարկ խոչընդոտ հանդիսացել է դրամական զոհարարութեան եւ նախաձեռնող ու մասնագէտ մարդկանց բացակայութիւնը: Վերջապէս անցեալ տարի Պետերբուրգի արեւելագիտական մայր ընկերութիւնը մի խնդրագրով Կովկասի կառավարչապետ իշխան Գոլցինի բարեհաճ ուղարկութիւնն էր հրաւիրել այդ բանի վրա եւ խնդրել էր նրա նախաձեռնողութիւնը Երեւանում ընկերութեան ճիւղ հիմնելու համար: Իշխան Գոլցինի շնորհիւ Երեւանի նահանգապետ կոմս Տիգրանուհին արեւելագիտական ընկերութեան Երեւանի բաժանմուն-

քի կազմակերպութեան եւ գործունէութեան մանրամասն ծրագրի մշակումը յանձնել էր տեղիս ուսաց ուսուցչական սեմինարիայի վերատեսուչ Միրոպիեմին, որը Արեւելքի մի քանի նշանաւոր քաղաքներում երկար ժամանակ մանկավարժական ասպարէզում գործել եւ դրա հետ զուգընթացաբար Արեւելքի մի քանի աղբիւրի լեզուն, պատմութիւնն ու կեանքը ուսումնասիրել է:

Ընկերութեան ճիւղի կազմակերպութեան եւ գործունէութեան ծրագրին արդէն կազմված է, բայց ոչ այնքան մանրամասն եւ ընդարձակ, որքան իսկապէս ցանկալի էր եւ եթէ ի նկատի ունենանք այն հանգամանքը, որ Երեւանում առհասարակ շատ քիչ է այնպիսի կրթված մարդկանց թիւը, որոնք հետաքրքրվէին մի այդպիսի ընկերութեան նպատակներով եւ նշանակութեամբ, այն ժամանակ միանգամայն հասկանալի է դառնում, որ այդ ընկերութիւնն իր սկզբնական շրջանում չէ կարող լայն եւ բազմակողմանի ծրագրով գործել: Այդ ընկերութեան Երեւանի ճիւղի գործունէութիւնը հետեւեալ երեք նպատակը պէտք է ունենայ. 1) առեւտրական-արդիւնաբերական, 2) գիտնական-կուլտուրական եւ 3) կրթական:

Վերջին ժամանակներս առաջ կառավարութիւնը մեծ ուշադրութիւն է դարձնում ընդհանրապէս Արեւելքի եւ մասնաւորապէս Պարսկաստանի բազմակողմանի ուսումնասիրութեան վրա եւ եռանդուն կերպով աշխատում է այնտեղ ձեռք բերել առեւտրական աղբիւրներ: Վիճակագրական մի քանի ճիշդ տեղեկութիւններ ցոյց են տալիս, որ Ռուսաստանը ժամանակի ընթացքում իրաւի Պարսկաստանի առեւտրական ասպարէզում հետզհետէ մեծանում եւ զգալի նուաճումներ է աւելի: Օրինակ 1840 թ.ին Ռուսաստանից Պարսկաստան է ներմուծվել մօտ մէկ միլիոն ռուբլու ապրանք, իսկ 1899 թ. մօտ 18 միլիոնի ապրանք, 1840 թ. Ռուսաստանից Պարսկաստանից ստացել է մօտ 4 միլիոն ռուբլու արժողութեան ապրանք, իսկ 1899 թ. մօտ 22 միլիոնի ապրանք:

տակները, բայց հրաշալի եւ վիթխարի են այստեղի մանաւանդ աշխատելու, բեռնակիր ձիերը, որոնցից չը կան ոչ մեզ մօտ եւ ոչ Ռուսաստանում: Սրանք մի-մի հակառակ են, որոնք սարսափելի ոյժի մասին գաղափար կը կազմի մարդ, երբ տեսնէ, թէ ինչ անհագին ծանրութիւններ, բեռներ են կրում այդ հաստաբետ անասունները, թած ժամանակ:

Ձիերից աւելի հետաքրքրութիւն է չարժան տաւարը, մասնաւորապէս վիթխարի կովերն ու ըստ երեւոյթին ամենի ցուլերը: Աջի են ընկնում հողմապան ցեղին պատկանող խալա-տաճաճուկ (չալ-չալ) կովերն ու ցուլերը, որոնք ամենից շատ մրցանակ են ստացել Երբ որ մարդ լսում է, որ ամեն մի կով օրական մօտ 20—30 լիտր կաթ է տալիս, այն ժամանակ միայն կշառաւորվում է անանաբուծութեան անհագին նշանակութիւնը տնտեսութեան եւ կեանքի բարօրութեան մէջ: Վիթխարի ցուլերը 2—3 տարեկան էին մեծ մասամբ, եւ ըստ երեւոյթին իրանց սեռի ամենիկները չէին ուղում կամ էին կարողանում ցոյց տալ, երեւի ընկճվելով երկաթեայ օղի ճնշող ոյժից, որ անց էր կացրած զիւրի միջից: Բոլոր տաւարի թիւը 1076 է, քիչ չէ մանաւանդ, որ ընտրելով զանազան սերունդներից ընտրվածներ են:

Հիմա պէտք է ներդրութիւն խնդրեմ յարգելի ընթերցողներից եւ նրանց դէպի գերմանացու ամենասիրելի ու մտերիմ անասունի խոզի բնակարանն առաջնորդեմ: Անշուշտ չը պիտի կարողանանք այն ստորափերի գաղա-հոտութիւնը եւ կեղտութիւնները հանա-դուրելը, որ անխուսափելի են վերոյիշեալ արարածների բնակարանից, մանաւանդ տար-վայ այս ժամանակը, ամառը: Բայց ահա, յար-գելի ընթերցողներին կարող ենք միամտացնել, խոզանոցի բաժանմունքների ճակատին կախ-ված է «աղմուկացրած» խօզը: Իբրեւ աղ-նուարած, հետեւաբար եւ աղմուկական անա-

*) Պակասում են լատկապէս, ալոպէս ասած, ձիարու-ծութեան համար, առաջակական դներով:

Վերոյիշեալ վիճակագրական թւերը պարզ-
ցոյց են տալիս, թէ Ռուսաստանը Արեւելքի,
մասնաւոր Պարսկաստանի հետ առեւտրական
ինչպիսի կարեւոր շահերով է կապւած, որով-
հետեւ Ռուսաստանի գործարաններում պատ-
րաստված չիթեղների, մահուղեղների, շաքարի,
երկաթեայ, ապակեայ, նաւթի եւ ուրիշ ապ-
րանքների մի զգալի տոկոս սպառվում է ընդ-
հանրապէս Արեւելքում եւ մասնաւորապէս
Պարսկաստանում, եւ բացի դրանից Ռուսաս-
տանը Պարսկաստանից ստանում է բաւակա-
նաչափ նիւթեր-ապրանքներ, օրինակ բամ-
բակ մրգեր, գորգեր, կաշի, բրինձ, զանազան
հանքեր եւ այլն։ Հէնց այդ է գլխաւոր պատ-
ճառը, որ արեւելագիտական ընկերութեան Ե-
րեւանի ճիւղի գործունէութեան գլխաւոր
նպատակներից մէկն էլ առեւտրական-արդիւ-
նաբերական է կազմում։

Ընկերութեան Երեւանի բաժանմունքը Պարս-
կաստանի հետ գործընթացաբար պէտք է ու-
սուեկանաբար եւ Երեւանեան նահանգը, որով-
հետեւ վերջինս իր մակերեւոյթի կազմու-
թեամբ, կլիմայով, բուսականութեամբ, կեն-
դանական աշխարհով, ազգաբնակչութեամբ,
կրօնով, վաճառականութեամբ եւ արդիւնա-
բերութեամբ բաւական նման է Պարսկաստա-
նին։

Ընկերութեան Երեւանի ճիւղի գործունէու-
թեան ծրագրի մէջ դժբաղդաբար շատ չնչին
տեղ է բռնում Թիւրքիայի ուսումնասիրու-
թիւնը, երեւի այն պատճառով, որ Երեւանեան
նահանգից Թիւրքիայի հետ անյարմար եւ
դժուար է առեւտրական հաղորդակցութիւն
ստեղծել գլխաւորապէս ճանապարհի լեռնոտ
կազմութեան չնորհիւ։ Թիւրքիայի ուսումնա-
սիրութեան հարցը, բացի առեւտրական-ար-
դիւնաբերական տեսակէտից, մասնաւորապէս
նշանակութիւն կարող էր ունենալ եւ Ռու-
սաստանի քաղաքականութեան չափերի վե-
րաբերմամբ, եթէ միայն ի նկատի ու-
նենանք այն հանգամանքը, որ Թիւրքիան
իրեւ. մի քաղաքական մարմին վաղուց
ի վեր կազմաւորւած մէջ է գտնվում եւ
եւրոպական պետութիւնների գրեթէ մեծ
մասը աշխատում է այնտեղ առեւտրական-քա-
ղաքական ազդեցութիւն ձեռք բերել ապագա-
յում նուաճումների անելու գիտաւորութեամբ։

Այդ տեսակէտից հսկայական քայլերով առա-
ջադիմում է, ի վնաս միւս պետութիւնների,
Գերմանիան, որը տնտեսական-քաղաքական մեծ
ազդեցութիւն է ձեռք բերել Թիւրքիայում, այն-
տեղ աշխատում է հիմնել գերմանական գա-
ղութներ եւ նրանց միջոցով իր գործարանների
արդիւնաբերութեան մեծ մասը սպառել, մա-
նաւանդ Փոքր-Ասիայում։

Արեւելագիտական ընկերութեան Երեւանի
սեւները, պէտք է, որ իրանց դիրքին եւ ա-
նուան վայել մաքրասիրութիւն եւ օրինաւո-
րութիւն պահպանեն, այնպէս որ համարձակ
կարող ենք ներս մտնել։ Ահա խոսքերում են
սկզբում գաւառական (Landschwein), այժմ
ազնուազարած, անհաւատալի մեծութեան սպի-
տակ մէրուները եւ վարագոյնը։ Ահա եւ
միւս կողմը իսկական «ազնուական» (Edle-
schweine) խոզերը, որոնք իրանց տոհմական
ազնուականութեամբ հպարտացած՝ արժամա-
րու են անխոստան անդորդների փայտի թիթեւ
չփուսներ։ Ամենից աչքի են ընկնում, ինչպէս
ակնարկեցինք, սպիտակ, անհաւատալի մեծու-
թեան խոզերը, որոնց 7 չարթնական դաւակ-
ները—գոճիւնները միայն արժեն 75—80
մարկ (մօտ 35—38 ռուբլի)։ Ի հարկէ, որպէս
եզրակացնում է ընթերցողը, դրանք ոչ ուսելու,
այլ սերունդ առաջացնելու, բուծանելու համար
են։ Այսպիսի կրիտէրիում պիտի ի նկատ առնել
նաեւ կենդանիների միւս բաժինների նկատ-
մամբ։ Ոչ ազնուազարած, սեւ խոզերից՝ յայտնի
են նրանք, որոնց սերունդը խոզան է մատա-
կանարարում գլխաւորապէս, եւ որոնք բաւա-
կանաչափ մրցանակներ ստացան։ Գուցէ խո-
զերի վրա մի քիչ երկար կանգնեցինք։ Ուրիշ
կերպ էլ չէր կարելի. գոնէ առիթից օգտվելով՝
սրանով յայտնեմք մեր երախտագիտութիւնը։
2Է որ սրանց Wurste-ը (երշիկ) եւ Schinken-ն
(ապուխտ) է ուսումնաւոր մի ուսանող, թէ
ազնուական եւ թէ հասարակ մահկանացու՝
համարեա ամբողջ տարին։

Ոչխարները 688 են։ Այծերը թւում համե-
մատաբար քիչ են։ Առաջինները մեծ մասամբ
պահպանվում են իրանց հրաշալի բուրդի
պատճառով։ Պարզ է, որ մեծ հոգս է տան-
վում լաւ ցեղ պահպանելու վրա։ Ինչ վերա-
բերում է երկրորդներին, համարեա թէ մեր
տեղի նոյն երկարամորուսներն են եւ իրանց
եղով ոչնչով չեն տարբերվում մերկներին ու

բաժանմունքի գիտնական կուլտուրական գոր-
ծունէութեան նպատակն է Արեւելքն ուսում-
նասիրել գիտնական, այսինքն պատմական,
աշխարհագրական, ազգագրական, կրօնական,
տնտեսական եւ այլ տեսակէտներով։

Արեւելքը, իբրեւ մարդկութեան քաղաքա-
կրթութեան օրրանը, միշտ գրաւել է գիտու-
թեան ուշադրութիւնը։ Երկրագնդի այդ մասը
պատմական ծաղկած կեանք էր վարում դեռ
այն ժամանակ, երբ կապեղական Յունաստանը
եւ Հուսիս խորհրդային էին խաւարի մէջ, որի
լուսարանութեան համար մեզ մինչեւ անգամ
աւանդութիւններ չեն հասել։

Ընկերութեան Երեւանի ճիւղը պէտք է
նպատակ է կարծաւորութիւններ տալ մասնագէտ
գիտնականներին բազմակողմանի կերպով ծա-
նօթանալու եւ ուսումնասիրելու Արեւելքը
գիտնական-կուլտուրական տեսակէտից։ Եւ
վերջապէս, ընկերութեան ճիւղի երրորդ նպա-
տակը կրթական է, հետեւեալ կէտերից բաղկա-
ցած. 1) ծանօթացնել ուսանողներին Արեւելքի եւ
նրա ազգաբնակչութեան հետ եւ ընդհանրապէս
Այս նպատակն իրագործելու համար արեւելա-
գիտական ընկերութեան Երեւանի բաժան-
մունքը ձեռնհաս մասնագէտների միջոցով
պէտք է ըստ կարելոյն աշխատէ ուսանողն
թարգմանի եւ հրատարակի իր սեփական
հանդիսի մէջ զանազան լեզուներով լոյս տե-
սած եւ արեւելագիտութեան նուիրված աշխա-
տութիւնները. 2) ուսաց լեզուի կուրսեր
հիմնել Արեւելքի զանազան մասերում եւ 3)
առեւտրական բարձրագոյն դպրոց հիմնել Երե-
ւանում թէ այդ նահանգի եւ թէ Պարսկաս-
տանի ազգաբնակչութեան համար։

Վերոյիշեալ գլխաւոր կէտերից է բաղկացած
արեւելագիտական ընկերութեան Երեւանի ճիւղի
գործունէութեան ծրագիրն ու նպատակը, որ
վերջականապէս ձեւակերպել եւ հաստատել
են ընկերութեան բաժանմունքի հիմնադիր
անդամները իրանց ընդհանուր ժողովում։

Բայց ընկերութեան ծրագրի եւ նպատակի
խելացի եւ համապատասխան գործադրութիւնը
կախված է նիւթական միջոցների գտնելուց,
որի մասին Երեւանում գումարված ընդհանուր
ժողովում երկար ու բարակ խօսակցութիւնից
յետոյ հիմնադիր անդամները եկել են այն եզ-
րակացութեան, որ ընկերութեան ճիւղը չէ
կարող իր յուր զին միայն մասնաւոր նուէր-
ներ եւ անդամավճարների վրա, այլ եւ որո-
շել են դիմել Պետերբուրգի արեւելագիտական
մայր ընկերութեան նիւթական օժանդակու-
թեան խնդրելու։ Մինչեւ այժմ կառավարու-
թեան կողմից պատժանապէս զեռ չը հաստատ-
ված ընկերութեան Երեւանի ճիւղը ունի մօտ
53 անգամ Այդ անգամների թւում կան եւ
Երեւանի հայ եւ թուրք աչքի ընկնող վաճա-

թւով էլ շատ քիչ են։ Եւ ինչու պիտի մի առան-
ձին հոգատարութեան առարկայ լինեն, քանի
որ դրանցից ստացած օգուտը համեմատաբար
նուազ է ոչխարների տուած օգուտից։ Եթէ
սրանց հետ կցենք նաեւ ձկների ու ձագար-
ների, կամ, ինչպէս գերմանացիք ասում են,
niedlich—սիրունիկ ձագարների ցուցահան-
դէսը, այն ժամանակ վերջացած կը լինենք
կենդանական թագաւորութիւնը ներկայ ցու-
ցահանդէսում։

Այս բոլորը գիտելուց յետոյ արժէ գնալ
այն հիմնադիր կաթնատուներ եւ մի թիւիւ
նախաճաշիկ ուտել—թարմ պանիր ու հաց
կամ կաթը եւ այլն. բայց որովհետեւ ուսա-
նողը, մասնաւորապէս մեր դրութեան ուսանողը,
իրաւունք չունի այդպիսի շուկայութիւններ ու-
նելու, այլ պիտի գնէ անհատական, ուսում թողնում
ենք այդ արտօնութիւնը ուրիշներին եւ չըր-
ջագայում ենք մոռութեամբ կախած ստամոքսով
ցուցահանդէսի միւս մասերը։

Եթէ պանիր ու հաց անուշ անելուց զերկ-
վեցինք, գոնէ նայենք հաւ միւս սրահում 674
տեսակ կարագների նմուշներին եւ այն դու-
ծիւններին, որոնցով պատրաստվում են նրանք։
Դէ՛հ, հիմա եկե՛ք եւ մեր խեղճ պատանների
առաւօտից մինչեւ երեկոյ քափ-քրտինք մտած՝
5—6 հոգով խոցի հարելը մի յիշե՛ք։ Մի
փոքրիկ տակառիկի մէջ ջրի հետ կէս ժամ
խառնեցէ՛ք մի ինչ որ պտուտ եկող փայտի
կտորով եւ պարզապէս է արտադան կարագը։

Աւելորդ համարելով մանրամասն նկարա-
գրել եւ յիշատակել բազմատեսակ ցուցահա-
նած իրեղէնները՝ լուսցի մեզնեաներ, ընդե-
ղէներ ցանկու, հանելու ամեն տեսակ գոր-
ծիւններ ու մեքենաներ, եւ այլն եւ այլն, մի
փոքր կանգ առնենք դաշտը մշակելու, պա-
րարտացնելու նիւթերի վրա։

Ամեն մի գիւղատնտես գիտէ, թէ որպիսի
նշանակութիւն ունեն հողը պարարտացնելու

ուսանողներից շատերը, որոնք առեւտրական
յարաբերութիւն ունեն Պարսկաստանի զանա-
զան քաղաքների հետ։

Լ. Բարայեան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Ասխարադ, յունիսի 13-ին
Ասխարադի հայ-լուսաւորչական կանանց
նորակազմ ընկերութեան վարչութիւնը խնդ-
րում է թոյլ տալ «Մշակի» միջոցով խորին
չնորակաւորութիւն յայտնել Սարգիսյանի հայ
վաճառականներին, մասնաւորապէս պ. Յակոբ
Նարվիկեանիցին, որի նախաձեռնութեամբ նը-
պատ է հաւաքվել յօդուտ ընկերութեան 57
ուրիշ 44 կողմից։ Մեր նորակազմ ընկերու-
թիւնը շատ կարօտ է այսպիսի եռանդուն
գործիչների եւ իւրօրով ենք, որ յարգելի պ.
Նարվիկեանիցի օրինակին հետեւողներ կը գտն-
վին։

Նախագահուհի Մամիկոնեանց

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Բագու, յունիսի 5-ին

Վերագաւաղով Անդրեասեան երկրիչ՝ նոր
միայն կարգացի «Մշակի» ներկայ տարվայ
ապրիլի 13-ի համարում հետեւեալ անարդար
լուրը իմ մասին, Ասխարադից հաղորդած.
«Այս օրերս երգիչ Ջաւաքեան տուեց այստեղ
երկրորդ կոնցերտը։ Երեսուցորդի խրատ չե-
ղաւ առաջին կոնցերտի անալոգութիւնը։»

Թէ ո՛վ է եւ ի՞նչ զգացմունքից գրողված է
անյայտ թղթակիցը գրել այդ տողերը—չը
գիտեմ։ Միայն իմ արտիստական վարկը պաշտ-
պանելու համար անհրաժեշտ եմ համարում
հերքել կրօնող թղթակցի խօսքերը։

Ասխարադում ես տուել եմ ոչ թէ երկու,
այլ երեք կոնցերտ, չորրորդ անգամ մասնակ-
ցել եմ տեղական նոր կազմով չայուհեաց
հարեգործական ընկերութեան օգտին տուած
երեկոյնում։ Երկրորդ եւ երրորդ կոնցերտ-
ները ես տուել եմ հասարակութեան խնդր-
քով։ Թէ որքան անալոգ են եղել իմ կոն-
ցերտները, այդ կարելի է իմանալ «Асхабадъ»
լրագրի № 36-ից եւ «Русский Туркестанъ»
լրագրից, ուր տպված են համարական բե-
ցենդիներ իմ կոնցերտների մասին։

Երգիչ Մ. Ջաւաքեանց

ՆԵՐՓԻՆ ԼՈՒՐԵՐ

Մեզ հաղորդում են, որ Վեհափառ Կաթո-
ղիկոսը գնալի է Հաղարծնի վանքը, որտեղից
պէտք է ուղեւորվի դէպի Սանահին կալուած-
ների բարեկարգութեան գործը առաջ տանե-
լու նպատակով։

Եունիսի 25-ին, երկուշաբթի, Կովկասի կա-
ռավարապետի պաշտօնակատար գեներալ-լէյ-
տենանտ Ֆրեդէ Թիֆլիսից տեղագիրովից Կո-
ջօր ամառանոցը։

հարցում զանազան, այսպէս կոչված, աղեր-
չիլիզալպէտէր եւ այլն, մասնաւորապէս կալի, կալի
աղը, որ պարարտացնելու կողմից առաջին
տեղն է բռնում։ Եւ անհ ընկերութիւնը ահա-
գին քանակութեամբ պարարտացնելու այս-
պիսի նիւթեր է պատրաստում եւ ցանկացող-
ներին վաճառում։ Տեսական ու գիտնական
բացատրութիւններից խուսափելու համար,
աւելի լաւ ենք համարում փաստեր եւ պարզ
օրինակներ բերել։ Այսպէս, վերոյիշեալ բաժան-
մունքի մասնաճիւղի տուած տեղեկութիւնից
երեւում է, որ այս տարի 3,045,079 կրկնակի
ցէնտներ (ցէնտները մօտ 3 պուդ) պարարտա-
ցնելու զանազան միջոցներ են վաճառվել,
3,992,899 մարկ արժողութեամբ, մինչդեռ
անցեալ տարի միայն 2,972,539 կրկնակի ցէնտ-
ներ։ Մի խօսքով ցուցահանդէսի մէջ հանդէս
դրվածներից կարելի է պարզ կերպով տեսնել, թէ
ինչ հաւաքին տարբերութիւն կայ, երբ հացահա-
տիկներ կամ այլ եւ այլ տուակներ պարարտացրած
հողում են ցանվում ու անպարարտ հողը ուղիղ
Այսպէս, կալիով պարարտացրած հողը ուղիղ
3—4 անգամ շատ արդիւնաւոր է տալիս, քան թէ
անպարարտ հողը։ Մի խօսքով, կալի արդիւնաբե-
րութիւնը այն նշանակութիւնն ունի բուսա-
կան թագաւորութեան մէջ, ինչ նշանակու-
թիւնն որ ունի մեր սովորական աղը մարդ-
կանց եւ անասունների կեանքում։

Ցուցահանդէսում տեղի ունեցող դասախօսու-
թիւններից, օրինակ Բերլինի պրոֆէսոր Հէրց-
ֆէլդի դասախօսութիւնից, ի միջի այլոց, երե-
ւում է, որ ձակոնդեղի *) մշակութիւնը հաւաքին
առաջադիմութիւն է արել, մասնաւորապէս վերջին
տարիներս Գերմանիայում։ Զանդեղի սերմերը
տէր են դառնել ամբողջ աշխարհին, միանգա-
մայն յետ մեղրով նոյն իսկ ֆրանսիական սեր-
մերը։ Ապագայում, ասում է յիշեալ պրոֆէսորը,

*) ձակոնդը ահագին դեր է խաղում շաքարի
արդիւնաբերութեան մէջ։

Մեզ հաղորդում են, որ Թիֆլիսի առեւ-
տրական բանկը յատկացրել է իր գումար-
ներից 1000 ռուբլի նպատակով Թիֆլիսի
ցուցահանդէսին։ Նոյն նպատակով Թիֆլիսի
կրեդիտային ընկերութիւնը նշանակել է հինգ
հարիւր ռուբլի։

Թիֆլիսի պոլիգէմէյստերի տարեկան հաշիւից,
ի միջի այլոց, երեւում է, որ Թիֆլիսում ըն-
դամներ 263 գործարաններ եւ գործատներ
կան, որոնց մէջ 1900 թւին 6,377 բանւորներ
կային։ Այդ գործարաններում արդիւնաբերու-
թեան գումարը հասնում էր 8,059,000 ռուբլու։

Եունիսի 26-ին Թիֆլիսի նահանգական դա-
տարանում քննվեց աւճախեան ձիաբաշի տէրե-
րի Թ. Կորգանովի եւ Պ. Ալեքեզովի 200,000
րուբլու պահանջը բէլիական անոնիմ ընկե-
րութիւնից։ Դատարանը վճեցեց անոնի 200,000
ր. յօգուտ Կորգանովի եւ 2751 ր. 7 կ. դա-
տարանական ծախսեր։

Թիֆլիսի առեւտրական դպրոցը գնեց Թիֆ-
լիսում էնֆիտեանցի տոււք, որի մէջ այժմ
գտնվում է։ Տոււք գնվեց 210 հազար ռուբլով։

Կիւմլից եւ Աստրախանից Կովկաս հիւր ե-
կած աշակերտ-ճանապարհորդները, ծանօթա-
նալով քաղաքի եւ նրա նշանաւոր տեղերի
հետ, ուղեւորվեցին դէպի Բաթում, որտեղից
նրանք դիտաւորութիւն ունեն ծովով ճանա-
պարհորդել դէպի Կրիմ։ Եւ ապա վերագաւաղ
իրանց տեղերը։

Կառավարչական սենատը պարզաբանեց, որ
մինչեւ օրինաւոր ամուսնութիւնը ունեցած
երեխաներին օրինական դարձնելու վերաբերեալ
օրէնքը տալիս է ապօրինի երեխաներին օրի-
նական դատակները բոլոր իրաւունքները եւ
դրանով այդ օրէնքը դարձնում է նրանց երկու
ծնողների տոնների անդամներ։

Պետերբուրգի բարձրագոյն իգական կուրսե-
րի պրոֆէսորներ խորհուրդը թոյլ տուեց կուր-
սերի մի քանի ուսանողուհիներին վերջնական
քննութիւններ բռնել ներկայ տարվայ աշնանը։
Աշնանային քննութիւնները նշանակված են
պատմա-լեզուաբանական բաժանմունքում օ-
գոստոսի 10-ից մինչեւ սեպտեմբերի 15-ը եւ
ֆիզիկա-մաթեմատիկական բաժանմունքում
օգոստոսի 20-ից մինչեւ սեպտեմբերի 11-ը։
Այն ուսանողուհիներին, որոնք չեն գալ քննու-
թիւնների ժամանակ, վճոված է համարել
մնացած նախկին կուրսերում երկրորդ տարին։

Թիֆլիսում սկսվել է ամառային տօթ եղա-

վտանգ կարող ենք սպասել շատ շատ մի ան-
գամ Ռուսաստանից եւ հիւսիսային երկրներին
սերմերից։ Ուշադրութեան արժանի է մասնա-
ւորապէս պրոֆէսոր Կիւրի նոր մեթոդը, թէ ինչպէս
պիտի հողը (վարելու) ցամաքեցնել ստորերկ-
րեայ կաւէ խողովակներով, եւ եկել է այն
եզրակացութեան, որ գետնի տակի ջուրը սեր-
մերին եւ պտուղներին ամենեւին վնաս չէ,
եթէ վարած հողից գոնէ 60 ցէնտիմէտր ներ-
քեւ մնայ։

Մենք կամենում ենք սրանով էլ փակել ներ-
կայ ցուցահանդէսի մեր համառօտ նկարագրու-
թիւնը, անհարկին համարելով մանրամասնու-
թիւնների մէջ մտնել, քանի որ կարող են
նոյն իսկ ձանձարով լինել ընթերցողի համար։
Այսպիսով, Հայլեն բռնեց առաջին տեղը՝ իր
ցուցահանած տարեկանների բազմատեսակու-
թեամբ եւ հետաքրքրականութեամբ, իսկ այ-
ցելուների թիւ կողմից՝ վերջին օրվայ վատ
եղանակի պատճառով երկրորդ տեղը՝ մին-
չեւ այժմ եղած 15 ցուցահանդէսների շար-
քում։ 1898 թ. Համալուրդում այցելել են
168,515, իսկ այժմ Հայլենում՝ 167,385 հոգի։
Բերլինում 1894 թւին՝ 154,046 հոգի։

Ինչ որ էլ լինի, առաջադիմական խոշոր
քայլեր է անում Գերմանիան, քայլեր՝ գիտու-
թեան մէջ, գիւղատնտեսութեան, քաղաքակա-
նութեան, սօցիալիզմի մէջ։ Եւ մարդ այս բո-
լորը տեսնելով, մասնաւորապէս մի փոքրիկ, խեղճ
ազգի զաւակ, այս դարմանալի ընդունակ ազգի
համակրելի կողմերին նախանձելով՝ մոռանում
է մի քանի ամեն բան եւ նրա երջանիկ դա-
ւակներին ակամայ ձայնակցում է եւ երգում.

Deutschland, Deutschland ueber alles,
Ueber alles in der Welt.
(Գերմանիա, Գերմանիա, ամեն բանից վեր,
Ամեն բանից վեր աշխարհին երեսին)։

Ի. Պանաճարեան

լեզվան անուանելու մասին Անգլիական գետա-
փի մի մասը Սենատի չինութիւնից մին-
չեւ Նիկոլայեւսկի կամուրջը. 2) Պետերբուր-
գում Մ. Դ. Սկորոլեւի արձան կանգնեցնե-
լու մասին, ընտրելով Պետերբուրգական-սո-
րոնայի վրա եղած հրապարակը, որ մօտենում
է կառուցվող Տրոյցկի կամուրջին. 3) արձանը
կառուցանելու համար ամբողջ Ռուսաստանում
հանգանակութիւն բանալու մասին, Պետեր-
բուրգի կողմից այդ նպատակին յատկացնելով
քսան եւ հինգ հազար ռուբլի:

ԽԱՐԿՈՎ. Կալուսական բանկի ակցիոնէր-
ները երկվան ժողովում վարչութեանը իրա-
ւունք է արված փոխառութիւն վերցնել պե-
տական բանկում պայմանաժամով վճարները
հատուցանելու համար, որի համար փինանսնե-
րի մինիստրը ակզրուցելով համաձայնութիւն
տուեց. վարչութեանը իրաւունք է արված
մշակել փոխառութեան պայմանները Մտադ-
րութիւն կայ երեք ամսից յետոյ, ոչ ուշ, ար-
տակարգ ժողով հրաւիրել բանկի գործերը,
նրա վիճակները եւ վիճակները ծածկելու մի-
ջոյնները քննելու համար: Վարչութեան նախա-
գահ ընտրված է Վ. Պ. Բաւալովսկի: Գիշե-
րը նշանակված է ժողովի շարունակութիւնը:

ԲՐԻՍՏՈՒԼԵՐՍԿ. Ամսից աւելի կիզիչ շո-
քեր էին անում, որ համում էին մինչեւ 40
աւտոման: Յունիսի 20-ին առաջին անգամ
եկեւ եւ այժմ ամեն օր անձրեւներ են գա-
լիս:

ԵԿԱՏԵՐՈՒԼԱ. Դատարանը այսօր անանկ
ճանաչեց այսօրից առեւտրական բանկը.
պարզվում են խոշոր անկանոնութիւններ գոր-
ծավարութեան մէջ:

ԼՕՆԴՈՆ. Պաշտօնապէս հրատարակեց Կիտ-
չէնէրի երկար զեկուցումը, ապրիլի 26-ին,
հարաւային Աֆրիկայում մարտ ամսից ի վեր
կատարված պատերազմական գործողութիւն-
ների մասին: Զեկուցման մէջ, ի միջի այլոց,
ասված է, թէ Կապի գաղութը արշաւած բօշո-
ները անկախված լրացուցիչ ոյժեր են ստացել
այդ գաղութում ապրող հարուստ բօշոներին:
Գիւղական ազգաբնակչութեան մի նշանաւոր
մարդ ամեն ժամանակ ոչ միայն առատ մը-
թերքներ էր մատակարարում նրանց, այլ եւ
ինչ ժամանակ որ պէտք էր տեղեկութիւններ
էր հաղորդում նրանց բօշոներին հետամուտ
եղած անգլիական զօրքերի շարժումների մա-
սին: Այդ երկու բանով նրանք շատ ծառայու-
թիւններ մատուցին ներս խոժած բօշոներին.
Փոքր ինչ անհանգստութիւն էր նկատվում նո-
րերս Կապի գաղութի ծայրագոյն հիւսիս-ա-
րեւմուտքում, ուր բօշոների զանազան զօրա-
խմբեր ժամանակ առ ժամանակ փորձ էին
անում անհանգստացնել անգլիական պահակա-
խմբերը, բայց այժմ այնանց զետեղված բոլոր
զօրքերը իրովին կարողացել են պահպանել ի-
րանց դիրքերը եւ արգելել թշնամուն արշաւե-
լու Կապի գաղութի ներքո:

ԼՕՆԴՈՆ. Պաշտօնական տեղեկութիւնների
համաձայն, մի շարքովայ ընթացքում մինչեւ
յունիսի 24-ը Հնդկական ժամառախոտով հի-
ւանդացել են 47 հոգի, որոնցից մեռել են
46-ը:

ԼՕՆԴՈՆ. Այսօր կայացաւ ազատամիտ կու-
սակցութեան ժողովը: Կէմպլէ-Բանէրման իր
ճառում յայտնեց, որ կուսակցութեան մէջի
երկպառակութիւններին պէտք է վերջ տրվի,
ապա թէ ոչ կուսակցութիւնը կը դադարի գո-
յութիւն ունենալուց: Այնուհետեւ նա ասաց.
«Պատերազմը պէտք է յաղթական կերպով
տարվի մինչեւ վերջը եւ ընդհանուր ներքումը
պէտք է արվի իբրեւ պայմաններից մէկը խա-
ղաղութեան դաշն կապելու: Անգլիացիները
պէտք է ունենան մի ձեռքում սուր, միւսում՝
ձիթների ոտ եւ պէտք է աշխատեն համա-
ձայնութեան գալ քաջ թշնամու հետ: Մի
քանի ճառարանների ճառերից յետոյ ժողովը
վստահութիւն յայտնեց Կէմպլէ-Բանէրմա-
նին:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. Յունիսի 26-ին Թիֆլիսի
հողային բանկի 50% զբաղական թղթերը—923/4
մանր առուծախսեր. նոյն բանկի 41/2% թղթ-
թերը եւ Գուբայիսի հողային բանկի 60% եւ
50% զբաղական թղթերը գնահատված չեն Ա.
Ի. Մանթաշեան եւ Ընկ. նախարարինաբերա-
կան եւ առեւտրական ընկերութեան ակցիա-
ները—224 մանր առուծախսեր:

Խմբագիր՝ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆՔԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԷԼԻԻՔ-ԱՂԱՄԱՆԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՆՈՒՒՒ ՔԱՂԱՔՈՒՄ

ՏՐՎՈՒՄ Ե ԿԱԳԱՂՈՎ

Մեղաքսի գործարան

Իր բոլոր պարագաներով, չինութիւններով, մե-
քենաներով եւ շարժական կազմով Պայմաննե-
րի մասին դիմել Յ. Մ. Միրզոյեանի ժառանգ-
ների գրասենեակը Չաչաւադէֆօկայա փողոցի
վրա, սեփական տան մէջ:

(հ. 4.)

1—2

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

սրանով յայտնում է, որ նրա առեւտրում յու-
լիսի 2-ին, ցերեկվայ 1 ժամին, նշանակված է
աճուրդ դէղինֆէկցիական կամէրային կի-
երկու սենեակներ կառուցանելու համար
1378 թ. 63 կօպէկ գումարի:

Աճուրդին մասնակցել ցանկացողները կարող
են տեսնել պայմանները Վարչութեան Շինա-
րարական բաժնում բոլոր լի օրերը ցերեկվայ
9 ժամից մինչեւ 2 ժամը:

2—3

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

սրանով յայտարարում է, որ իր առեւտրում
ներկայ տարվայ յունիսի 23-ին, ցերեկվայ ժա-
մը 1-ին, նշանակված է աճուրդ պատրաստե-
լու համար, վիճակագրական եղանակով, 63 դնա-
հատական պլանշետներ 1475 ռուբլի գումարի:
Աճուրդին մասնակցել ցանկացողները պայման-
ները կարող են տեսնել Վարչութեան չինարա-
րական բաժնում բոլոր լի օրերը, առաւօտեան
ժամը 9-ից մինչեւ ցերեկվայ ժամը 2-ը:

3—3

Արդանուէի միջատեան երկուսն եկեղեցական
ծխական ուսումնարանի համար

ՀԱՐԱՄԱՆՈՐ Է

Յէնզաւոր ուսուցիչ, որը պէտք է գիտնայ եւ
երգեցիկ խումբ կազմել եկեղեցում երգելու
համար: Պայմանների մասին կարող են դիմել
Թիֆլիս, գրախանութ «Գուրմաներէր», Լօրիս-
Մէլիքեան փողոց, № 11:

3—4

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

(ՅՅՈՒՅ ԲՐԱՅԷ)

Օր. Շ. Տէր-ՆԻԿՈՂԱՅՈՍԵԱՆ

Ընդունում է հիւանդներին ամենայն օր՝
Առաւօտեան 9—3 ժ.
Երեկոյեան 5—7 ժ.
Հասցեն՝ Սուրբ-Նշան եկեղեցու դաւթում:
6—8

Լոյս տեսաւ

Ա. Լաւրայեանի

Ա. Լ. Բ. Օ. Մ.

Կարս քաղաքի եւ նրա շրջանի տեսարանների
(Կարս, Սարիղամիշ, Արղահան, Խնձկոնք,
Մաղառաւ բերդ, Անի, Բազաւոր, Հոռոմոս,
Զրիվու. ընդամենը 32 նկար):
Գինն է 1 թ. 50 կ. ճանապարհածախսով:
Դիմել՝ Ա. Դաւանչու. Կարս. 7—10

ԿԱՐԱ-ՄՈՒՐՁԱՆ

հրաւիրում է խմբի անդամներին, տիկիներին,
օրիորդներին եւ պարոններին չնորս բերել իր
մօտ երեքշաբթի, յուլիսի 10-ին, երեկոյեան
ժամը 6-ին, առաջիկայ Կ ո վ կ ա ս ե ա ն ց ու լ-
ց ա հ ա ն դ է ս ի ն ս ե պ տ ե մ բ եր ի 1-ից մինչեւ
նոյնքաների 1-ը երեսուն համար գ եր գ եւ
համար խումբ եւ ծրագիր կազմելու: Ընդուն-
վում են նոր անձինք եւս: Թիֆլիս, Մու-
րանսկայա, Կ. Դաւանսկայա, 3—5

Լոյս տեսաւ

ԲՈՒՎ. ԱՐԵՐՈՒՆՈՒ

„ԲԺՇԿԻ ԶՐՈՅՑՆԵՐԻ“ № 2

1) „Վ Ա Տ Յ Ա Ի“

8 ն կ ա ռ ո վ Գինն է 6 կօպ.

2) „ԱՍՈՒՍՆՈՒԹԻՒՆ“ Գինն է 75 կ.

Մախվում է Թիֆլիսի ու գաւառների գը-
րավաճառանոցներում եւ հեղինակի մօտ:
Պարսկաստանից դիմելու են Թ ա ռ ի գ
գօկտօր Փաշայեանին:

Մինչեւ սեպտեմբեր դիմել՝ Լեւոնու Մե-
լիք-Ադամյան, Թիֆլիս «Մուրշ»:

Պ. Մելիք-Ադամյանից «Վատ ցաւ» գըր-
քովը վրացի վաճառի կարող են տեսնալ
միայն նրանք, որոնք կը պահանջեն ոչ պա-
կաս քան 50 օրինակ:

13—15

Վ Ր Ա Յ Ա Ձ Ն Ի Ա Կ Ա Ն Ն Ե Ր Ի Թ Ա Տ Ր Օ Ն Ո Ւ Մ

Ուրբաթ, յունիսի 29. ին

ՅՕԳՈՒՏ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԹԱՏՐՈՆԻ

Կը արվի խառն ներկայացում ՀԱՄԵՐԳՈՎ. Խաղալու եւ ուսաց սեկցիայի կողմից

I. „ВЪ ЧУЖОМЪ ПИРУ ПОХМЕЛЪЕ“

Ком. въ 2 д. соч. А. Островскаго.

Հայոց սեկցիայի կողմից

II. «ԿԸԹԻ - ԿԸԹԹ»

Հայերէն, ռուսերէն եւ թուրքերէն լեզուներով

Վօր. 1 գործ. հեղ. Մաղաթեանի

Վրաց սեկցիայի կողմից

III. «Յ Ժ Յ Ո Ն Տ Յ Յ Ո Ն Ե»

Համ. 1 ծախ. Ժ. Յաջաղոնա.

Տոմարները ծախվում են թատրոնի կասսայում ներկայացման նախընթաց օրից:
Սկիզբն է ճիշդ ժամը 8-ին երեկոյեան:

1—2

Թիֆլիսի Քաղաքային Կրեդիտային Ընկերութեան

Վարչութիւնը

սրանով յայտարարում է, որ ներկայ յունիսի 23-ին ներքեւ յիշած կալուածքների տեղի ունե-
ցած աճուրդի անալոգիան պատճառով, համաձայն այն յայտարարութեան, որ տպված էր
ներկայ տարվայ «Правительственный Вѣстникъ» լրագրի № 103-ում եւ «Кавказъ» լրագրի
№ 130-ում, նշանակված է երկրորդ եւ վերջին աճուրդ ներկայ յունիսի 30-ին, ցերեկվայ 12
ժամին:

№ 356. ԴՐՈՒՅԵՎ Տ. Ն. Երկու հարեան հողաբաժիններ նրանց վրա եղած չինութիւննե-
րով, որոնցից առաջինը 30 քառ. սաժ. տարածութիւն ունի, երկրորդը—33 քառ.
սաժ. ութերորդ քաղաքամասում, Պրօէկտայա փողոցի վրա, Զուլուրէթում, հիմնա-
կան պարտք 2489 թ. 79 կօպ., ապառիկներ 155 թ. 27 կօպէկ:

№ 580. ԴՐՈՒՅԵՎԱ Ե. Ս. 86 քառ. սաժ. հողաբաժին կամ որքան դուրս կը գալ իսկապէս,
երկարկանի տնով, երկու նոյնպիսի ֆիդէլիտներով, 8-րդ քաղաքամասում, Պրօէկտայա
փողոցի վրա (Ամատուրիսկի պէրէյոսկ), հիմնական պարտք 4106 թ. 93 կ., ապա-
ռիկ 273 թ. 53 կօպէկ:

№ 1601. ԲԱՆՈՒՏՈՎ Դ. Ի. Հողաբաժին 9 սաժ. 5 արշ. եւ 16 վերջ քառ. կամ որքան կը
դուրս գալ իսկապէս, նրա վրա եղած երկարկանի տնով, նկուղով եւ վերնատնով
երկրորդ քաղաքամասում, Լաւորաօրոնայա փողոցի վրա, հիմնական պարտքն է
2701 թ. 36 կ., ապառիկներ 128 թ. 98 կօպէկ:

№ 2421. ԲԱՐԻՉԵՎ Ա. Գ. (անցել է Տէր-Ասատուրովին). Հողաբաժին 50 քառ. սաժէն տա-
րածութեամբ կամ որքան կը դուրս գալ իսկապէս, նրա վրա եղած երկարկանի տը-
նով, նկուղով եւ մի յարկանի ֆիդէլիտ 5-րդ քաղաքամասում, Գրեաղայա փողոցի
վրա, հիմնական պարտքն է 3408 թ. 48 կ., ապառիկներ 108 թ. 99 կօպէկ:

1—2

ԳՈՒՏՏԵՆԲԵՐԳ ԳՐԱԽԱՆՈՒԹՈՒՄ

վաճառվում են

«Զէյթունի ներկայէն եւ անցեալէն» 1 50
«Բանաստեղծը եւ հերոսը» փոխ. Տ. Յովհաննիսեան. — 25
«Ֆրանս-պրուսական պատերազմը» թարգմ. Փրանս. Տ. Յովհաննիսեան. — 5
Դիմել՝ Թիֆլիս. Կнижный магазинъ „Гуттенбергъ“ (Лорисъ-Меликовская улица, №
11), Г. Галустяну.

1—5

Հ Ո Յ Ս Տ Ե Ս Ա Ի

Լ Է Օ

ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄԵՐ ԿԵԱՆՔԸ, ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԱՆՑԵԱԼՈՒՄ

Հատոր առաջինը—XVI—XVII դար

Գինն է 1 ՐՈՒՆԻ 50 ԿՕՊԷԿ

Մախվում է Թիֆլիսում, «Մալի» խմբագրատանը.

Օտարաքաղաքացիները դիմում են. Թիֆլիս, редакция «Мпакъ».

6—10

BATEAUX A VAPEUR FRANÇAIS N. PAQUET ET C^{ie}

ՅՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳԱՅՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.

կանոնաւոր եւ ուղղակի նաւադնացութիւն ՄԱՐՍԷԼԻՑ ԲԱՐՈՒՄ, չորեքշաբթի օրերը, երկու
շաբաթը մի անգամ:

Եւ հալոսակը՝ Բաթումից Մարսել, մտնելով Տրապիզոն, Սամսոն եւ Պոլիս: Մեկնում է
Բաթումից՝ չորեքշաբթի 4/17 յուլիսի չորեքշաբթի ՄԱՐԿԱՍԻ, նաւապետ ԳԱՐԻԻԳ. Եւ այսպէս
շարունակաբար, երկու շաբաթը մի անգամ, չորեքշաբթի օրերը, ժամը 4-ին կէսօրից յետոյ:
Բաթումից Պարիզ ուղղակի հաղորդակցութեան տոմարները արժեւում են սովորականին:

Ամբողջ մի անգամ կանոնաւոր հաղորդակցութիւն Բաթումի Եւ Անադոլիայէն մէջ, ընդու-
նելով ապրանքներ բոլոր հիւսիսային նաւահանգիստներին համար:

Ապրանքները եւ ճանապարհորդները մասին հարկաւոր տեղեկութիւններ ստանալու հա-
մար թող բարեհաճեն դիմել ընկերութեան գործակալատաներին:

ԲԱՐՈՒՄԻՄ—պ. Վիկտօր Դ'Արնօն, Նաբէլէժնայա: ԹիֆլիսիՄ—պ. Օ. Գ. Բաբե-
կեանդանեանին, Սիմոն փող. Խօջափարուսովի եւ Մայսուրաձէի քաղաքատար: ԲԱԳՈՒՄ—Եղը.
Վ. եւ Ի. Մուրաֆեաններին, Նաբէլէժնայա փողոց, առեւ Կրասնիսկեանին, № 27: ՆՕՎՈՐՈՍ-
ՍԻՅՈՎ—Վաղդիսլակայի երկաթուղու առեւտրական գործակալութեան (Ե. Կ. Գ.) 20—20

Կ Օ Ն Ֆ Ե Կ տ ի եւ շ Օ Կ Օ Ղ ա դ ի գ ո ռ ծ ա ռ ա լ

Փ. Ն. ՓՐԻԳՕՆԵԱՆ

ԹԻՖԼԻՍԻՄ

Յայտնում է, որ իր գործարանում պատրաստվում են շաքարեղէնների ամեն տեսակ ար-
տադրութիւններ, որոնք թէ իրանց յատկութեամբ, մաքրութեամբ եւ թէ մատչելի գներով
մրցում են Ռուսաստանի առաջնակարգ գործարանների արտադրութիւնների հետ:

Պատրաստում են՝ կարամէլ մրգեղէնից (Фруктовая карамель), կարամէլ լիցված (с начинкою),
մարմէլադ (пастилла), զէֆիր (зефир), դրաժէ (драже), քրիվա-շաքար (пчелы-шары),
Գործարանում աշխատում են հմուտ վարպետներ՝ մայրաքաղաքից հրաւիրված յայտնի
վարպետի հնդդութեան ասկ:

Պատուէրները կատարվում են անմիջապէս եւ ճշգրտութեամբ:
Պէշա-կուրատը ուղարկվում է ցանկացողներին ձրի:

Պատուէրների համար դիմել՝ Թիֆլիս, Нахаловка, Павловская улица, собственный
домъ, № 12.

Թիֆլիսում մեր գործարանի արտադրութիւնները ծախվում են հետեւեալ մագաղինե-
րում—Գ. Բալաեանդուրեանի, Գ. Ս. Տէր-Սիմօնեանի, Զ. Ի. Սուլիսեանի,
Զ. Պ. Պօպովի, Եղը. Ս. Մ. Աբրահամօֆեանի, Հալի-Թախմասնօվի
պարսկական մագաղինում, Պ ե ա ռ թ ի խաղաղական մագաղինում եւ այլն: Տեղեֆօն № 362:

43—100